

Ռ. Ա. ԻՇխանյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեսրոպ Մաշտոցին նվիրված ծավալուն գրականության մեջ հաճախ է ներշնչվել մեծ լուսավորչի մի կարևոր դերը, որի մասին թեև պատմական աղբյուրները կոնկրետ չեն խոսում, բայց խոսում է հայ ժողովրդի ողջ պատմությունը: Դա այն է, որ Մաշտոցը նշանավոր գիտնական, հայ գրավոր մշակույթի հիմնադիր և նույնիսկ մեր առաջին հեղինակն ու թարգմանիչը լինելուց բացի, եղել է իր ժողովրդի կենսունակության, պատմական բախտի հոգսերով այրվող մի գործիչ: Մեսրոպը հաճախ է դիտվել որպես այն ոգու, այն կենսական ուժի սկզբնավորողն ու խորհրդանիշը, որը վստահելի զենք է դարձել հայ ժողովրդի ձեռքին ևստմերսոպյան դարերի ամենաահավոր փորձությունների ժամանակ: Հայ պետականության վերացման նախօրյակին Մեսրոպի գյուտով ու գործունեությամբ ստեղծված այդ զենքը ոչ թե մի սովորական սպանող ու ոչնչացնող զենք էր; այլ կենսահաստատ, մի փոքր ժողովրդի կյանքի իրավունքը պաշտպանող վահան, դա ոչ թե անարդարություն հաստատող սովորական ուժ էր, այլ արդարության զորավիգ բռնի ուժի և անարդարության դարերում: Մեսրոպը իր ժողովրդին տվեց այն, ինչ երկար ժամանակ փոխարինեց և պետական կենտրոնացված իշխանությունն ու ռազմական հզոր ուժին, և խորամանկ դիվանագիտությանն ու զորավոր դաշնակիցներին, որոնցից զուրկ է եղել հայ ժողովուրդը: Մեսրոպի սկսած հայրենապահական շարժումը միջնադարում և հետո ամենատարբեր ձևերն ու դրսևորումներն ունեցավ: Նրա ամենակարևոր արտահայտություններից մեկն էլ հայկական տպագրությունն էր:

450 տարի է անցել այն օրից, երբ տպագրական մամուլի տակից դուրս եկան առաջին տպագիր մեսրոպատառ գրքի թերթերը: Հայկական տպագրությունը լինելով մեսրոպյան գյուտի շնորհիվ սկսված շարժման շարունակությունը՝ միաժամանակ այդ գյուտից հետո ամենամեծ իրադարձությունն էր հայ մշակույթի պատմության մեջ:

* * *

Հայ տպագրությունը սկիզբ առավ և իր առաջին քայլերն արեց 16-րդ դարում: Այդ դարից մեզ հասել են 18 հայատառ գրքեր, որոնցից 16-ը տպագրվել են հայ տպագրիչների ձեռքով: Ընդհատ է, այդ հարյուրամյակի ընթացքում հայկական տպագրությունը ընթանում է անկանոն, մեծ ընդմիջումներով, սակայն ամեն ինչ խոսում է այն բանի օգտին, որ հայ մշակույթի ոչ միայն վարդացման, այլ նույնիսկ պահպանման համար տպագրությունը կենսական հարց էր դարձել:

Հայերեն առաջին հինգ գրքերը տպագրվեցին 1512—1513 թվականներին Վենետիկում, այդ տպագրությունը կապված է Հակոբ Մեղապարտի անվան հետ: Հակոբի անձի մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել, միայն հիշյալ հինգ գրքերից մեկի մեջ (Պատարագատետր) գտնում ենք նրա անունը: Շատ է դրվել

Հակոբի մասին, ոմանք նրան համարել են կեսարացի, ոմանք՝ ջուղայեցի վաճառական, ոմանք կաթոլիկ հոգևորական և այլն, բայց ամենը միայն ենթադրություններ են, առանց բավարար հիմքի: Մի բան, սակայն, կարելի է վստահ ասել, որ 16-րդ դարի սկզբում տպված այդ հինգ գրքերը զուտ հայկական տպագրության արդյունք են: Ծնթագրություններ են արվել, որ այդ գրքերը տպվել են օտարների ձեռքով: Ոմանք էլ գտնում են, որ իրեն մեղապարտ համարող Հակոբ անունով մարդը ոչ թե այդ գրքերի տպագրիչն է եղել, այլ դրամատուն կամ տպագրության հետ առնչվող որևէ անձ: Այս վերջին հարցը ըստ էության երկրորդական է, թեև ամեն ինչ խոսում է այն բանի օգտին, որ Հակոբը հենց հրատարակիչն ու տպագրիչն է եղել: Կարևորն այն է, որ եթե նույնիսկ ենթադրենք, որ տպագրիչը եղել է ուրիշ մի անձ, միևնույն է այդ անձը պետք է եղա՛յ լինի հայազգի և այն էլ Հայաստանից եկած մարդ, որն ինքը ձեռնարկել է տպագրության գործին, ձուլել տվել տառեր, ինքը սրբագրել և առաջ տարել ողջ տպագրությունը: Այլ կերպ էլ չի կարելի պատկերացնել այն օրերին երկու տարվա ընթացքում հայերեն հինգ գրքի երևան գալու փաստը:

Հին գրքերի տպագրության մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ նրանց հրատարակիչը և տպագրիչը մեծ մասամբ միևնույն անձն էր լինում, թեև կան դեպքեր, երբ պետք է տարբերել հրատարակիչին, այսինքն՝ տպագրության նախաձեռնողին տպագրիչից, այսինքն բուն տպագրությունը ղեկավարողից: Որ առաջին հինգ գրքերի տպագրության նախաձեռնողը օտարազգի չի եղել, երևում է նախ այդ գրքերի բովանդակությունից²: Ինչ վերաբերում է բուն տպագրությանը, ապա այստեղ նույնքան անառարկելի է հայ մարդու, այն էլ բավական գրագետ մարդու աշխատանքը: Ավելորդ չէ հիշել, որ հետագայում, երբ վենետիկյան օտարազգի տպարանատերերը հայերեն գրքեր էին տպագրում նրանց մոտ աշխատում էր հայերեն իմացող մեկը, որն առնվազն պետք է ընտրեր բնագիրը և սրբագրեր տպագրվող նյութը:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ով է եղել հայերեն այդ գրքերը տպագրող մամուլի, այսինքն՝ տպարանի տերը, ապա այստեղ ևս ամենից հավանականն է թվում այն, որ դա նույն այն մարդն է, որը կազմակերպել և ղեկավարել է տպագրությունը: Մեր բանասերները, շղիտես ինչու, հակված են եղել մտածելու, որ հայերեն առաջին հինգ գրքերը տպվել են որևէ իտալացու տպարանում և այդ գրքերի վրա եղած տպարանական նշանը փնտրել են վենետիկի մեջ նույն ժամանակաշրջանում տպագրված իտալերեն և այլալեզու բազմաթիվ գրքերի վրա, ինչպես և արխիվներում թերթեր են այն օրերի վենետիկյան տպարաններին վերաբերող բոլոր նյութերը և սակայն Հակոբ Մեղապարտի անվան

1 Հակոբ Մեղապարտի անվան հիշատակության քննությունը «Պատարագատետրի» մեջ (Երևանյա սուրբ տառն ի. ջ. կր. ի աստուածապահ քաղաքս ի վննժ, որ է վննտիկ ֆրանկոտեան. ձեռամբ մեղապարտ յակոբին. ով որ կարդայր մեղաց թողութիւն խնդրեցէր յաստուծոյ») արդեն անառարկելիորեն ասում է այն մասին, որ խոսքը գիրքը տպագրողի մասին է, բանի որ հայ հնատիպ գրքերի վրա միշտ տպագրիչներն են այդպես հիշատակվում, և ոչ մի դեպք չկա, որ այդ ձևով հիշատակվի տպագրության հետ առնչվող մի այլ անձ:

2 Ավրուպայում հայերեն գրքեր հրատարակվել են նաև եվրոպացի կաթոլիկ քարոզիչների, ինչպես և գիտնականների կողմից: Սակայն Հակոբի անունով մեղ հասած գրքերից ո՛չ հայկական երգերի ժողովածուն («Տաղարանք»), ո՛չ «Աղթարրի» կամ «Ալրբաթագրի» նման կախարդանքների հավաքածուները, որոնք հետաքրքրում էին միայն այն օրերի Հայաստանի բնակչության որոշակի մասին, ո՛չ էլ լուսավորչական եկեղեցու «Պատարագատետրը» չեն կարող տպագրված լինել մի օտարականի նախաձեռնությամբ:

հետ առնչվող գրքերի տպարանանիշը ոչ մի տեղ չեն հայտնաբերել, այդ նիշի վրա եղած լատիներեն տառերը ոչ մի տպարանի կամ տպարանատիրոջ անվանը չեն համընկել³։ Եվ մի՞թե հենց այս հանգամանքը չի ասում, որ հայերեն առաջին հինգ գրքերը 1512—1513 թվականներին վենետիկում գործող իտալական տպարաններից ոչ մեկում էլ չեն տպվել, որ դրանք տպվել են մի այնպիսի տպարանում, ուր միայն այդ հայերեն գրքերն է տպագրել և վերացել ասպարեզից։ Իսկ միայն հայերեն գրքեր տպագրող տպարանի կազմակերպիչն ու տերը օտարագրի լինելը չէր կարող, այդպիսի որևէ օրինակ մեզ չի տալիս հայ հնատիպ գրքի պատմությունը։ Մինչդեռ սովորական էին այն դեպքերը, երբ որևէ հայ տպագրիչ ստեղծում էր տպարան և տպագրում այնտեղ մի քանի կամ նույնիսկ մեկ գիրք, որից հետո տպարանը դադարում էր գոյություն ունենալուց⁴։ 16—17-րդ դարերում հայ տպարանի մեջ հինգ անուն գիրք տպելը (յուրաքանչյուրը 200—300 տպաքանակով) մեծ երևույթ էր։

16-րդ դարի սկզբի հայ առաջին տպագրիչը կարող էր միայն գրագետ, դարգացած մեկը լինել, այդպիսիք էին այն ժամանակաշրջանի բոլոր տպագրիչները։ Այստեղ միայն ոմանց մոտ տարակուսանք է առաջացնում մի հանգամանք. մարդիկ հարց են տալիս, թե ինչպես կարող էր մի գիտուն մարդ մեծ ճիգ ու ջանքով լույս աշխարհ հանել «ուրբաթագրքի» և «Աղթարքի» նման անամեջ գրքեր, լի ամեն տեսակ անմիտ գուշակություններով և կախարդանքներով։ Բայց դա էլ հասկանալի կդառնա, եթե հաշվի առնենք, որ նման գրքեր դուրս են եկել նաև պատմությանը հայտնի այնպիսի գիտուն տպագրիչների մամուլների տակից, ինչպես, ասենք, Ամստերդամի Վանանդեցիներն են⁵։ Այստեղ, իհարկե, պետք է նկատի ունենալ և՛ տպագրիչների նյութական միջոցների հարցը (երազհասանները և կախարդանքների հետ կապված այլ կարգի գրքերը սովորաբար հարուստ վաճառականների պատվերներն էին լինում) և ժամանակի բարբերն ու մարդկանց մտածելակերպը, ինչպես և տպագրության մի կարևոր առանձնահատկությունը, որ նա միշտ էլ օգտակար գրքերի հետ աշխարհ է հանել նաև անպետքները։

Եթե 16-րդ դարի առաջին հայ տպագրիչի հարցը ինչ-որ չափով վեճերի առարկա է եղել, ապա հաջորդ երկու դեպքերում գործ ունենք պատմությանը բավական հայտնի մարդկանց հետ։ Դրանցից մեկը Աբգար դպիրն է Եվդոկիայից, որը վենետիկում 1565-ին տպագրեց երկու գիրք և ապա մինչև 1569 թ. շարունակելով տպագրական աշխատանքը Կ. Պոլսում՝ լույս ընծայեց ևս յոթ գիրք։ Մյուսը Հովհաննես Տերզնցին է Տիգրանակերտից, որը մի գիրք տպագրեց

3 Եղել են այդ տառերը «բացելու» փորձեր, որոնցից ամենանշանավորը Գ. Գալեմբերյանինն է («Հանդես ամսօրյա», 1913, № 12), բայց դրանք բոլորն էլ արհեստական են և մերժվել են մեր բանասիրության կողմից (տե՛ս, օրինակ, Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 49—50)։ Այստեղ հնարավորություն չունենք մանրամասն կանգ առնելու Հակոբի գրքերին եղած նշանի հարցի վրա, հիշենք միայն, որ տպարանանիշներ, ինչպես և լատիներեն տառեր ու լատինատառ անուններ կան ուրիշ հայկական տպարաններից դուրս եկած շատ հնատիպ գրքերի վրա (թեև ոչ Հակոբի նշանի նման հանելուկային ձևով)։

4 Օրինակ, Նահապետ Գյուլնազարի տպարանը վենետիկում տպագրել է միայն մեկ գիրք (1687), Լվովի հայկական տպարանը՝ 2 գիրք (1616), Երեմիա Չելեպիի տպարանը Կ. Պոլսում՝ 2 գիրք (1677—1678) և այլն։

5 Թե՛ Ոսկան Երևանցին և թե՛ Վանանդեցիները խորենացու կամ Առաքել Դավրիժեցու գրքերի հետ տպագրել են երազհասաններ, մարմնախաղացներ և կախարդանքների ու գուշակությունների նվիրված այլ գրքեր, իսկ Կ. Պոլսի լավագույն տպարանները տպել են նույնիսկ հմայիներ (թախումաններ)։

Հոռոմում (1585-ին) Արդար դպիրի որդի Սուլթանշահի հետ Գոմինիչի Բազալի տպարանում և մի դիրք էլ (Սաղմոսարան) իր սլափաստած (կամ պատվիրած) տառերով՝ 1587-ին տպագրեց Վենետիկում:

16-րդ դարից հայտնի են երկու գիրք ևս, ուր տեղ են գտել մեսրոպյան տառերը, դրանք բազմալեզու քերականության գրքեր են, որոնցից մեկը 1537-ին տպվել է Փարիզում (Գ. Պոստելի կողմից), մյուսը՝ 1539-ին Բավիայում (Թե-սեոս Ամբրոսիոսի կողմից): Սակայն այս երկու գրքերն էլ գրվել և տպվել են օտարների ջանքերով, ուստի թեև ինչ-որ չափով հայկական գրքեր կարող են համարվել, բայց հայ տպագրության արգասիք չեն⁶:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 16-րդ դարում հանդես են գալիս երեք հայ տպագրիչներ, երեքն էլ Հայաստանից Եվրոպա եկած: Հայտնի է, որ Արդար դպիրը Եվրոպա է եկել Միքայել կաթողիկոսի հանձնարարությունները կատարելու: Այդ հանձնարարություններից մեկը ըստ երևույթին հայերեն գրքեր տպագրելն է եղել: Ամեն ինչից երևում է, որ Տերզնցին նույնպես Եվրոպա է գնացել հայերեն գրքեր տպագրելու հատուկ նպատակով: Նույնը պետք է մտածել հայերեն առաջին գրքերը տպագրողի մասին, որը հայերեն ձեռագրերը առած ահագին տարածություն է կտրել ու հասել Իտալիա այդ ձեռագրերը տպագրելու նպատակով:

Հայաստանը տպագրության մեծ կարիք ուներ: Այս եզրակացությունն է բխում հայկական տպագրության առաջին քայլերի ուսումնասիրությունից:

Այդ եզրակացությանը կարելի է հանդել նաև այն օրերի Հայաստանի վիճակը պատկերացնելով: Թուրքական ամենատարբեր ցեղերի անվերջ ավերածություններից նոր ավատված երկիրը երկու մասի էր բաժանվել, ինչպես և Մեսրոպի գործունեության օրերին: Միայն հին Պարսկաստանի ու Բյուզանդիայի փոխարեն, այս անգամ Հայաստանը բաժանողները Օսմանյան Թուրքիան և նոր Պարսկաստանն էին, որոնց տիրակալները դեռ երեկ կիսալայրների ցեղերի հրոսակապետեր էին⁶: 15-րդ դարի վերջից շուրջ 300 տարի տևած թուրք-իրանական ավերիչ պատերազմների ամենաառաջին զոհը միշտ էլ Հայաստանն է եղել, որը դարձել էր փլատակների և քարայրների մեջ ծվարած մարդկանց երկիր:

Պետք է ավելացնել նաև, որ 16-րդ դարի երկրորդ կեսից սկսած ուժեղացավ հայ ժողովրդի առանձին հատվածների օտարացումը կամ, ինչպես ասում են, սպիտակ ջարդը, որը սովորաբար ավելի ավերիչ է լինում: 16-րդ դարի երկրորդ կեսից մինչև 17-րդի կեսերը Օսմանյան կայսրության մեջ և Իրանում գազաթնակետին է հասնում քրիստոնյա ժողովուրդներին հավատափոխության

6 Գ. Լեոնյանը («Հայ գիրքը և տպագրության արվեստը», էջ 74) 1587-ին Տերզնցու տպագրած Ասղմոսարանի մասին գրում է. «արդյոք Արգարի թողած տառերն են օգտագործված»: Երևանի Պետական Մատենադարանն ունի թե՛ Արգարի և թե՛ Տերզնցու սաղմոսարանները, դրանց տառերը բոլորովին տարբեր են: Առաջին դեպքում գործ ունենք շատ խոշոր բոլորագրի հետ, երկրորդում՝ շատ մանր: Ըստ երևույթին, թե՛ Հակոբ Մեղապարտի, թե՛ Արգարի և թե՛ Տերզնցու տպագրած գրքերի տառերը պատրաստվել են նրանց ձեռքի տակ եղած ձեռագրերի տառերի օրինակով, բանի որ այդ երեք առաջին հայտատու տպագրությունները շատ նման են ձեռագրերի:

7 Հավանական է թվում, որ 16-րդ դարում (և նույնիսկ 15-րդում) Եվրոպական լեզուներով տպագրված ուրիշ գրքերի մեջ էլ լինեն հայատառ հատվածներ, թեև առայժմ հայտնաբերված են միայն հիշյալ երկուսը:

8 Պարսկաստանում կենտրոնական պետականության վերականգնողները և նոր Պարսկաստանի առաջին տիրակալները թուրքական ցեղապետեր են եղել:

անվան տակ թուրքացնելու ու պարսկացնելու քաղաքականությունը, որին ենթակա էին նաև հայերը:

Սի կողմից տնտեսական ու քաղաքական հալածանքները, իսկ ավելի շատ այն ժամանակվա հայ վերնախավի և հոգևոր դասի ապականված բարբերը, անզուսպ օտարամոլությունը պատճառ էին դառնում, որ ավելի ու ավելի շատ հայեր կորցնեն իրենց ազգային ինքնավստահությունը և ձուլվեն օտարների մեջ: Այդ հակումը նկատվում էր թե՛ մայր երկրում և՛ թե՛ գաղութահայության մեջ: Փաղութներում, օրինակ, այդ շրջանում կատարվեց կամ մեծ շափերի հասավ կեհաստանի, Ուկրաինայի, Մոլդավիայի և այլ վայրերի հայության ձուլումը: Հայ ժողովրդի որոշ հատվածների օտարացմանը նպաստում էին նաև կաթոլիկ գործիչների այն խմբերը, որոնք դավանափոխության անվան տակ ասիմիլյատորական քաղաքականություն էին առաջ մղում:

Ահա այսպիսի մի ժամանակաշրջանում էր, որ հայ ժողովրդի մեջ դեռևս այս ու այնտեղ ապրող կենդանի ուժերը նոր միջոցներ էին փնտրում ժողովրդի մեջ դիմադրողականությունն ուժեղացնելու համար: Այդ կարգի փորձված միջոցներից էր, իհարկե, Մեսրոպի սկզբնավորած մշակութային շարժումը և ոգին, սակայն այդ ուժն էլ հոգևարքի մեջ էր ընկել:

Թեև թուրք-մոնղոլական ասպատակությունների ողջ շրջանում, ինչպես և թուրք-պարսկական պատերազմների դարաշրջանում հայ գրչության արվեստը բավական տոկուն գտնվեց և հայ ձեռագրերը ստեղծվում էին Հայաստանի մերթի այս մերթի այն անկյունում, սակայն մի շարք վկայություններից երևում է, որ 16—17-րդ դարերի Հայաստանում գրքի մեծ պակաս կար, եթե շատենք գրքի սով: Երկրամասի և մեր մատենագրության մեջ հայերեն գրքերի, ողջ գրադարանների այրման, ոչնչացման մասին եղած տեղեկությունները: Իսկ մեսրոպյան գյուտը կյանք և ուժ ունի ամենից առաջ գրքերի մեջ: Հայերեն գրքերի պակասելու հետ միասին նվազում է մեսրոպյան գյուտի նշանակությունը: Հետաքրքիր փաստ է այն, որ 16-րդ դարի 80-ական թվականներին, երբ Կիլիկիայի Ազարիա կաթողիկոսը որոշում է կաթոլիկական դավանանք ընդունել, Վատիկանի առաջ նրա դրած կարևոր պայմաններից ճեկն էլ այն էր, որ Հոռմը տպագրի հայերեն գրքեր⁹: Այդ առիթով պապին գրած իր նամակում կաթողիկոսը գանգատվում էր հայերեն Աստվածաշնչի շափաղանց խիստ պակասի մասին¹⁰: Հայ գրքի մեծ պակասի ու դրա վնասների մասին գանգատներ կարողում ենք նաև հնատիպ գրքերի հիշատակարաններում:

Հայաստանի պայմաններն այնպիսիք էին, որ հայ գրքի կարևորությունը շափաղանց էր մեծացել, իսկ իրականում այնտեղ գրական ամսյություն էր տիրում: «Հոգևարքի վերջին բույսերն էր ապրում և Սահակ—Մեսրոպյան ժառանգությունը՝ հայոց գրականությունը», «Հայը մոռացել էր իր գրքերը», — իրավացիորեն գրում է կենն այդ դարերի Հայաստանի մասին¹¹:

Եվ ահա տպագրությունն էր, որ պիտի օգնության հասներ խոշտանգված Հայաստանի կենդանի ուժերին և նոր կորով տար մեսրոպյան գրին ու գրականությանը, որպեսզի նա կարողանար կատարել այն դերը, որ ստացել էր Մեսրոպ Մաշտոցից:

⁹ Ա Պ ա յ ճ յ ա ն, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 311:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Լ և ո, Հայ գրքի տոնը, Թիֆլիս, 1912, էջ 50, 75:

Սակայն թե՛ 16-րդ և՛ թե՛ 17-րդ դարերի քարուքանդ Հայաստանում տպարան ստեղծելու մասին մտածելն անգամ անմտություն կլիներ, ուստի Հայաստանը իր տպարանները ստեղծում է նվրուկալում:

Միանգամայն անհիմն է շատերի կողմից արտահայտված այն միտքը, որ եվրոպական երկրներում կատարված առաջին հայկական տպագրությունները այդ երկրների հայկական գաղութների արդյունք են: Հայ տպագրության սկզբից մինչև 18-րդ դարը, շուրջ երկու հարյուր տարվա ընթացքում ոչ մի դեպք չկա, որ գաղութարանակ հայր եվրոպայում հայերեն գիրք տպագրեր կամ տպարան հիմներ¹²: Ընդհակառակը, կան շատ դեպքեր, երբ եվրոպայի ապագայնացող գաղութահայերը շեն օժանդակել կամ նույնիսկ խանդարել են մայր երկրից գիրք տպագրելու առաքելությանը եվրոպա եկած մարդկանց գործունեությանը¹³:

Երբ աչքի ենք անցկացնում հայ տպագրության առաջին երկու հարյուրամյակի ընթացքում գործած տպագրիչների հիշատակարանները՝ պարզ են դառնում այդ, իրոք որ հերոս ռազմիրանների կրած կամավոր տառապանքները հայ գիրն ու գրականությունը պահպանելու համար: Շատերը տպագրության պատճառով կորցրել են իրենց ողջ ունեցվածքը, քաղցած մնացել օտար երկրում, եղել են տարիներով հայ տպարանում ձրի աշխատող խանդավառված մարդիկ (հիշենք զրաշար Մատթեոս Հովհաննիսյանին, որը 14 տարի առանց վարձի աշխատել է Ռսկանյան տպարանում): Մարդիկ մի երկրից հայածվել են, փախել մի այլ երկիր, վերսկսել հայ գրքերի տպագրությունը: Շատ հայ տպագրիչներ տարիներ շարունակ գիշերներ են լուսացրել կապարե տառերի վրա, քայքայել իրենց առողջությունը: Երբեմն մի գրքի տպագրությունը երեք-չոսու և ավելի տարիների տառապանքով էր զուլխ գալիս: Մեծ զոհերով է ստեղծվել ու պահպանվել մեսրոպատառ տպագրությունը:

Հայ տպագրության մի կարևոր առանձնահատկությունն էլ այն էր, որ ի տարբերություն եվրոպական տպագրության, որի մղիչ ուժը մեծ մասամբ նյութական շահն է եղել, հայ տպագրիչների գործունեությունը ամենից առաջ հայրենի մշակույթի և ժողովրդի ինքնության պահպանման նպատակ է հետապնդել: Հնարավոր չէ նշել մինչև 18-րդ դարը գործած որևէ հայ տպագրիչի, որը առնվազն նյութական մեծ վնասներ կրած չլինի իր հայրենանվեր գործի համար:

Թե որքան են եղել մայր երկրից եվրոպա տպագրության մեկնող այդ պատգամավորները այժմ անհնար է ասել: Մենք կարող ենք խոսել նրանցից միայն հաջողակների մասին, որոնք զոհերի և տառապանքների գնով գտնել մեկ կամ մի քանի գիրք կարողացել են տպագրել, և ժամանակի մեզ է հասցրել այդ գրքերը: Եթե 16-րդ դարում զրանց թիվը երեքն էր, ապա 17-րդ դարում նրանք ավելի շատ են դառնում: 1615—16 թվականներին Հայաստանից Լվով եկած րադիչեցի քահանա Հովհաննես Քարմատանենցը մեծ ծախսով հիմնում է տպարան

¹² Թացառություն կկազմի Կ. Պոլիսը, եթե այնտեղի հայությանը եվրոպական հայ գաղութ համարելու լինենք:

¹³ Կարելի է հիշել, օրինակ, այն սառը, եթե շասենք, թշնամական վերարերմուները, որ ցուցաբերեցին Լիվոնոյի հայ գաղութի բնակիչները էջմիածնից գիրք տպագրելու համար եկած Մատթեոս Մարեցու և ապա Ռսկան Սրեանցու նկատմամբ, որի մասին վերջիններս խոսում են իրենց գրքերի հիշատակարաններում (տե՛ս «Հիսուս որդի», Ամստերդամ, 1660 և «Աստվածաշունչ», Ամստերդամ, 1666 հիշատակարանները): Նույն կերպ վերարերմուցին մեծահարուստ լեհահայերը Հայաստանից եկած մարդու ջանքերով Լվովում բացված տպարանի նկատմամբ:

րան և Երկու գիրք տպագրում այնտեղ, այնուհետև տպագրության գործով Հայաստանից կամ Հայաստանի պատվերով Իտալիա ևն գալիս Հովհաննես Անկյուրացին և Հովհաննես Զուղայեցին, որոնցից մեկը տպագրում է Երկու (1642—1643), մյուսը մեկ (1644) գիրք: Կարելի է հիշատակել նաև Փասպար Սահրագյանին, որին Իտալիայում հաջողվեց իրականացնել Երեք¹⁴ գրքի տպագրություն (1686—1687), Նահապետ Գյուլնաղարին, որը 1687-ին Վենետիկում տպագրում է Երկրորդ աշխարհաբար գիրքը և այլն: Այս շրջանում նկատելի քանակով հայերեն գրքեր են սկսում տպագրվել նաև վենետիկյան օտարազգի տպարանատերերի կողմից (Միքելանջելո Բարրոնի, Անտոնիո Բարտոլի, Ստեֆանո Օրլանդո, Դեմետրիո Թեոդոսիո և այլն), ինչպես և 1627-ին Հոմումում հիմնադրված կաթոլիկական քարոզի Ուրբանյան տպարանում: Պետք է ասել, որ օտարազգիների տպարաններում գրքերը սովորաբար տպվում էին հայերի պատվերով: Օրինակ, հայտնի է, որ Մխիթարյանները մի շարք գրքեր են տպագրել Վենետիկի իտալական տպարաններում:

Սակայն 17-րդ դարը հայկական տպագրության համար ամենից ավելի նշանակալից եղավ Երկու իրադարձությամբ: Առաջինն այն էր, որ ինչպես քիչ հետո ցույց կտանք, Հայաստանին շատ մոտիկ մի վայրում՝ Նոր Զուղայում հայերն ինքնուրույն կատարեցին տպագրության գյուտը ու ստեղծեցին տպարան և Երկրորդ, որ հայ տպագրությունը առանձին, իրարից անջատ փորձերից ու ճիգերից վեր ածվեց մշտական գործող մի ձևոնարկության: Այս վերջին կարևոր փաստը կատարվեց ամստերդամյան հայկական տպագրության և Կ. Պոլսում Երկրորդ տպագրության սկզբնավորման շնորհիվ: Ամստերդամի տպագրության հիմնադիրը 1658—60 թթ. Փիլիպոս կաթողիկոսի դպիր Մատթեոս Ծարեցին էր ջուղայեցի վաճառական Ավետիս Ղիճենցի հետ, սակայն այդ տպագրության, ինչպես և ընդհանրապես հայ հին տպագրության ամենամեծ դեմքը դարձավ Ոսկան Երևանցին: Վերջինս նախ ստեղծեց մշտական գործող տպարան: Էջմիածնի¹⁵ անվան այդ տպարանը ավելի քան տասը տարի Ամստերդամում գործելուց հետո տեղափոխվեց Մարսել, իր ճյուղերն ունեցավ Լիվոռնոյում, Կ. Պոլսում, նույնիսկ Իզմիրում և որի հիման վրա 1685-ին ստեղծվեց Վանսնդեցիների հայտնի տպարանը Ամստերդամում: Ոսկանի և Վանսնդեցիների տպարանները հիմք դարձան 1788 թ. Վենետիկում կազմակերպված և մինչև օրս գործող Մխիթարյան տպարանի համար, որի մշակութային գերը հսկայական եղավ:

Ոսկան Երևանցին պատրաստեց նաև տպագրիչների մի հրաշալի սերունդ, որոնցից չի կարելի չհիշատակել տպագրության գործի այնպիսի հմուտ ու անձնավեր վարպետների, ինչպիսիք են՝ Կարապետ Աղրիանեցին, Սողոմոն Առնյա նը, Մատթեոս Հովհաննիսյանը: Ոսկանի շնորհիվ տպագրությունը հայոց մեջ դարձավ գործածվող արհեստներից մեկը:

Ոսկան Երևանցին այնպիսի բարեփոխման ենթարկեց հայ տպագրական տառերը, ստեղծեց զլխատառերի և բոլորագրի այնպիսի տեսակներ, որոնք մինչև օրս էլ որոշ փոփոխություններով օգտագործվում են հայկական տպագրության մեջ:

¹⁴ Գրքերից երկուսը նա տպագրում է Թադեոս Համազասպյան Երևանցի քահանայի հետ, որը սակայն կատարել է նաև վնասակար մի գործ հայ տպագրության մեջ, Ոսկան Երևանցու Մարսելի նշանավոր տպարանի բայթայման պատճառ դառնալով:

¹⁵ Ոսկանի տպարաններն ամենուրեք կրում էին «Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի» անունը:

Ոսկան Երևանցին առաջինն էր, որ հաջողեցրեց հայերեն Աստվածաշնչի տպագրությունը, որը չափազանց ծանր, մեծ միտք ու տոկունություն պահանջող մի գործ էր: Նրանից առաջ Աստվածաշունչ տպագրելու մի շարք փորձերը (Արգար դպիրի, Խաչատուր Կեսարացու, Հովհաննես Զուլայեցու, Պաուլո Պիրոմալի և ուրիշների) ասպարդյուն էին անցել:

Ոսկան Երևանցու շնորհիվ բաղմատեսակ դարձավ հայ տպարանի արտադրանքը, լուսավորչական եկեղեցուն պետքական գրքերի հետ միասին Ոսկանյան տպարանը լույս բնծայեց նաև հայ մատենագիրների ստեղծագործությունները, հայ միջնադարյան առակների ժողովածուն (Աղվեսագիրք), այբբենաբանություն, քերականության գրքեր, վերջապես առաջին անգամ ձյղտեղ տպագրվեց արևելահայ աշխարհարարով զրված դիրքը՝ «Արհեստ համարողութեանը», որը լույս բնծայեցին ոսկանի աշակերտները Մարսելում նրա մահից մի տարի անց (1675-ին)¹⁶:

Ոսկան Երևանցին մեծացրեց նաև հայերեն գրքերի տպարանակը: Եթե նախորդ հայ տպագրիչները յուրաքանչյուր գիրքը տպում էին 200—300, իսկ հետագայում ամենաշատը՝ 500—600 օրինակով, ապա Ոսկանի տպարանի համար սովորական էր 1500—2000, նույնիսկ 3000 տպարանակը: Ոսկանյան տպարանը միայն Ամստերդամում և Մարսելում տպագրեց մոտ 50 անուն գիրք¹⁷, և թեև նկատի ունենանք նրա գրքերի մեծ տպարանակը և այն, որ այդ գրքերը տարվում էին Հայաստան, ինչպես և տարբեր վայրերի հայ դպրոցները, ապա սպասելի էր հսկայական հայրենանվեր դերը, որ կատարեց հայ մեծ տպագրիչը: Հայ գրքի վտանգավոր պակասը ամենից ավելի Ոսկան Երևանցու շնորհիվ էր, որ սկսեց վերանայլ, մեարդատառ գիրքը այլևս մատչելի էր դառնում շատերի համար, մեծանում էր հայ գրի ու հայոց լեզվի կշիռն ու դերը:

Վերջապես, Ոսկանի մեծագույն դերը եղավ այն, որ նա ստեղծեց չափազանց բարձրորակ տպագրություն: Նա ճիգ ու ջանք չէր խնայում տպագրվելիք բնագրերի լավագույն ձևագրերը հայթայթելու համար, քրտնաջան աշխատում էր այդ ձևագրերի համեմատման, ճշտման վրա, և ապա բժախնդիր ջանասիրությամբ սրբագրում տպագրվող թերթերը: Ոսկանյան տպագրությունները այնքան վստահելի ու գրադետ էին, որ հետագայում թե՛ հայ, թե՛ օտարազգի տպագրիչները ամեն կերպ աշխատում էին հայ գրքերի տպագրությունը կատարել Ոսկանյան տպարանից դուրս եկած դրքերից: Բարձր էր այն գրքի արժեքը, որը արտատպություն էր ոսկանյան սրբագրված տպագրություններից: Ինչ վերաբերում է Ոսկան Երևանցու տպագրությունների մաքրությանը, հստակությանը, ձևավորմանն ու նկարազարդմանը, ապա նրանց կարող են նախասնձել նաև այսօրվա շատ տպարաններ:

¹⁶ Որոշ հեղինակներ այն կարծիքն են հայտնել, որ աշխարհարար առաջին գիրքը 1687-ին Վենետիկում նահապետ Գյուլնազարի տպագրած «Պարզարանութիւն սաղմոսացո»-ն է (տե՛ս, օրինակ, Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, էջ 96, Լևոն, Հայկական տպագրություն, հտ. 1, 1904, էջ 397), իրականում «Արհեստ համարողութեանը» տպագրվել է 12 տարի դրանից առաջ, նրա լեզուն միջբարբառային դարարարյան թեթև մշակման ենթարկված աշխարհարարն է, շատ մոտ այսօրվա արևելահայ գրական լեզվին:

¹⁷ Գ. Լևոնյանը («Հայ գիրքը և տպագրության արվեստը», էջ 108) գրում է, որ Ոսկանի ամստերդամյան տպարանից դուրս է եկել 14 գիրք: Մեզ հայտնի են Ոսկանի ամստերդամյան տպարանի՝ 23, մարսելյան տպարանի՝ 26 տպագրություն, իսկ րեզանդատայես Ամստերդամում տպագրված՝ 61 հայերեն գիրք:

Ոսկան Երևանցին հայկական տպագրության համար մոտավորապես կատարեց նույն դերը, ինչ Ալզոս Մանուցիոսը՝ իտալական, էլզևիրյանը՝ հոլանդական կամ էտյեննեյը՝ ֆրանսիական տպագրության գործում:

Ինչպես ասվեց, ոսկանյան տպագրության անմիջական ժառանգը և դավժանանդեցիների տպարանը Ամստերդամում: Վերջինս պահպանեց և զարգացրեց ոսկանյան լավագույն ավանդները և տվեց հայ տպագրության այնպիսի խոշոր զեմբեր, ինչպես Թովմաս և Ղուկաս Վանանդեցիներն են:

Ի դեպ, ասենք, մի շարք փաստեր վկայում են, որ Ամստերդամում բացի Ոսկանի և Վանանդեցիների տպարանից 1690-ական թվականներից մինչև 1718 թ. գործել է մի երրորդ տպարան, որից այսօր մեր ձեռքի տակ կան շարակնոցների վեց տպագրություն¹⁸ և որի մասին չի խոսվել մեր բանասիրության մեջ:

17-րդ դարի վերջին Ոսկան Երևանցու աշակերտները տպագրություն են սկսում նաև Կոստանդնուպոլսում: Այդ ժամանակ Պոլսում սկսում են գործել նաև երկու ուրիշ հայ տպագրիչներ, դրանք են Կրիզոս Մարավանցին (1698-ից) և Աստվածատուր դպիր Ապուլեխցին (1799-ից)¹⁹: Վերջինիս հիմնած տպարանը դարձավ ամենակարևորակցացն ու բեղմնավորը Պոլսում, նրա կյանքը տևեց մեկուկես դարից ավելի (մեկ ծանոթ են այդ ընտանիքի տպարանից մինչև 1800 թ. դուրս եկած 154 անուն գիրք), Աստվածատուրյանների տունը տվեց այնպիսի նշանավոր հայ տպագրիչներ, ինչպիսիք են Հովհաննեսն ու Պողոսը:

1569-ից հետո, երբ Պոլսում փակվում է Արգար դպիրի տպարանը, ավելի քան հարյուր տարի այդ քաղաքում հայկական տպագրություն չի լինում: Միայն 1677—78 թթ. Երևմտա Չելեպի Քյոմյուրճյանը տպագրում է երկու գիրք (Ներսես Շնորհալի «Գիրք ի մնացորդաց» և «Տնօրինականք»), որով և սկսվում է Պոլսի տպագրության երկրորդ շրջանը:

Այնուհետև ամբողջ 18-րդ դարում Պոլիսը և դավ հայ տպագրության ամենակարևոր կենտրոնը: Այդ քաղաքը մեծ առավելություն ուներ հայ տպագրության համար: Մի կողմից այն կից էր Նվրոպային և այդ տեսակետից տպագրական տեխնիկան այնտեղ կարող էր հեշտությամբ զարգանալ, մյուս կողմից զարգացած և խոշոր քաղաքներից հայրենիքին ամենից մոտ Պոլիսն էր: Պոլիսը չարմար էր նաև այն տեսակետից, որ, որքան էլ այդ զարմանալի թվա, հայ տպագրությունը այնտեղ շատ ավելի ազատ էր ճնշումներից ու գրաքննությունից, քան Նվրոպայի որևէ քաղաքում: Կաթոլիկական Իտալիայում և Ֆրանսիա-

18 Գ. Ջարրահանյանը այդ շարակնոցներից երկուսն ունեցել է. ձեռքի տակ և նիթագրել, որ Ամստերդամում տպագրված լինելու մասին տեղեկությունը, որ տրված է գրքերի հիշատակարաններում, ճիշտ չէ («Հայկակ. մատենագիտ.», էջ 514): Պետ. Մատենադարանի և Հանրային գրադարանի ֆոնդերում մենք հայտնաբերեցինք շորս ուրիշ այդպիսի շարակնոցներ: Բոլոր վեց շարակնոցներից երեքի վրա պահպանվել են տպագրության թվականները՝ 1692, 1712 և 1718, մյուս երեք հրատարակությունների սկզբից ու վերջից թերթեր են պակասում: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վեց շարակնոցներն էլ իրոք ամստերդամյան են: Ըստ երևույթին Ամստերդամից Ոսկանի հետանալուց հետո նրա տպարանի մի մասը մնում է պարտատերերին և ինչ-որ մեկի կողմից գործի է դրվում: Այդ տպարանը գործել է մինչև 1718-ը, ուստի է Ամստերդամում հայկական տպագրությունը տեղ է մինչև այդ թվականը և ոչ թե մինչև 1717-ը (Վանանդեցիների տպարանի փակումը), ինչպես ընդունված է մեր բանասիրության մեջ:

19 Գ. Լևոնյանը և Թեոդիկը Աստվածատուրյանների տպագրական գործունեության սկիզբը համարում են 1700-ը: Նրանք ծանոթ չեն եղել Աստվածատուրյան տպարանից դուրս եկած, 1799 թ. կրող մի շարակնոցի, որի մեկ օրինակը այսօր պահվում է Մատենադարանում:

յում կասկածանքով էին նայում լուսավորչական հայի սմենն մի տպագրության վրա, իսկ բողոքական Հոլանդիայում հայ տպարանը խեղդում էին հոլանդացի դրամատերերը: 1512-ից մինչև հայ նոր մշակույթի ու գրականության սկիզբը՝ 1800 թվականը ամենից ավելի շատ հայատառ գիրք տպագրվեց Կոստանդնուպոլսում²⁰:

18-րդ դարում շարունակվում է հայ տպագրության ծաղկումը, որն սկսվել էր անցյալ դարի կեսերից: Հայկական տպագրությունը անցնում է Հնդկաստան (1772) և Ռուսաստան (1781): Սակայն այս հարյուրամյակի ամենակարևոր իրադարձությունը բուն Հայաստանի սրտում՝ էջմիածնում՝ տպարանի հիմնադրությունն էր Սիմեոն Կրեանցու ջանքերով (1771):

Այսպիսով Գուտենբերգի հայտնագործությունից շուրջ 70 տարի անց հայերն ունեցան տպագրություն, որը սակայն 260 տարի վտարանդի մնաց, թափառեց օտար քաղաքներում, հալածվեց ու խոշտանգվեց, բայց դիմացավ ժամանակի փորձությանը, մինչև որ մայր երկրում հնարավոր եղավ նրան հաստատվել և ամուր արմատներ գցել:

* * *

Յուրաքանչյուր ժողովրդի հին տպագրությունը գնահատելիս առաջին չափանիշը ընդունված է վերցնել այն, թե երբ է տպագրվել տվյալ ժողովրդի լեզվով առաջին գիրքը: Սակայն այդ կարգի թվականը կիմաստավորվի այն դեպքում, երբ որոշակի լինի ընդհանրապես արդի տպագրության սկզբնավորման հարցը: Մի քանի գրքագետներ վերջին ժամանակներս փորձեցին մեթոժել կամ կասկածի տակ առնել 15-րդ դարի քառասնական թվականներին Գերմանիայում Յոհան Գուտենբերգի կատարած գյուտի արժեքը՝ գուտենբերգյան տպագրությունը համարելով չինական հին տպագրության սոսկական շարունակությունը, նրա մի օղակը: Մի տեսակետ, որ ամբողջովին հակապատմական է:

Այս հարցին անհրաժեշտ է երկու խոսքով անդրադառնալ ոչ միայն հայկական տպագրության սկիզբը ճիշտ արժեքավորելու, այլև տպագրության պատմության գործում հայերի մատուցած որոշ կարևոր ծառայությունները վեր հանելու նպատակով:

Գրատպության էությունը շարժական տառերով, այսինքն՝ շարվող ու նորից ցրվող տառերով տպագրելն է (ի հակադրություն փայտափորագիր՝ քարտեղագրական անշարժ տառերով դրոշմմանը, որը տպագրություն չի համարվում): Զինաստանում 1041—1049 թվականներին դարբին Բի Շենը կավից պատրաստած շարժական տառերով սկսեց տպագրել չինարեն գրքեր: Ապա չինական յուրօրինակ տպագրությունը իսկական ծաղկման հասավ, այսօր էլ հիացնում են այն շրջանից մեկ հասած չինական տպագիր գրքերը իրենց գեղեցկությամբ ու շքեղ ձևավորմամբ: 14-րդ դարում այդ տպագրական արվեստը անցավ Կորեա և Ճապոնիա:

²⁰ Այնպիսի կարծիք կա (օրինակ, Լևո, Հայ գրքի տոնը, էջ 97), որ ամենից շատ հայ հնատիպ գրքեր տպագրվել են Իտալիայում, հատկապես Վենետիկում: Սակայն ամենամանրամասն հաշվումները չհաստատեցին այդ: Մեր կազմած մատենագիտական ցանկում տեղ են դրել աշխարհի դրադարաններում պահվող, ինչպես և գրավոր աղբյուրներում հիշատակվող 322 անուն հայատառ գիրք՝ մինչև 1800 թիվը տպագրված Իտալիայում, գրանցից 255-ը՝ Վենետիկում, մինչդեռ մինչև նույն թվականը Պոլսում կատարված տպագրությունների քանակը մեր ունեցած տվյալներով՝ 337 է:

Սակայն գրատպության պարզացման գործում որքան էլ մեծ լինեն շարժական տառերի գաղափարը, շատ ավելի կարևոր էր տպագրական առավել պարզ ու վստահելի տեխնիկայի մշակումը: Հետաքրքրական է նշել, որ շարժական տառերով տպագրությունը եղել է դեռևս շինական տպագրությունից էլ շատ առաջ: Օրինակ, մեր թվարկությունից 2000 տարի առաջ Կրևտե կղզու Ֆեստ քաղաքում կավի վրա տպագրություն է կատարվել շարժական տառերով²¹, որի նմուշն այսօր պահպանված է:

Ավելորդ չէ նշել նաև, որ հվրոպայի տարբեր վայրերում նախքան գուտենբերգյան գրատպությունը եղել են տպագրության փորձեր: Օրինակ, Հոլանդիայի Հարլեմ քաղաքում դեռևս 15-րդ դարի քսանական թվականներին շարժական տառերով տպագրություն է կատարում Լորենց Յանսենը (Կոստեր), որը ըստ տեղեկությունների տպագրել է «Մարդկային փրկության հայելի» գիրքը: Դուտենբերգից անկախ, նրա հետ միաժամանակ գրատպություն է կատարվել Ֆրանսիայի Բրյուզզե քաղաքում Յոհանն Բրիտոյի կողմից, որը 1440-ական թվականներին գուտենբերգյան Աստվածաշնչից առաջ տպագրել է «Դուրսդուր» կոչվող ֆրանսերեն գիրքը, իսկ 1444—1446 թթ. Ավինյոն քաղաքում տպագրության մեր է գրադվել Վալդֆոգելը, մոտավորապես նույն ժամանակ Իտալիայում տպագրության փորձեր է արել Պամֆիլիո Կաստալդին:

Իվ շնայած այս ամենին, պատմական ամենաստույգ տեղեկությունները պարզորոշ կերպով վկայում են, որ այսօրվա գրատպությունը սկիզբ է առել Գուտենբերգից: Գուտենբերգի տպագրական տեխնիկան է, որ այսօր գործում է ամբողջ աշխարհում և շատ կողմերով պահպանել է իր նախնական տեսքը (օրինակ, Գուտենբերգի պատրաստած մամուլի սկզբունքը մինչև օրս էլ չի փոխվել): Պատմության աչքի առաջ Մայնցում Դուտենբերգի կատարած գյուտե էր, որ անցավ և՛ Իտալիա (1465-ին), և՛ Ֆրանսիա (1470-ին), և՛ Հոլանդիա (1473-ին), և՛ հվրոպայի այլ մասերը, իսկ այստեղից էլ Ամերիկայի և Ասիայի երկրները, այդ թվում նաև Չինաստան: «Իվրոպայում թղթի արտադրությունն ու գրատպությունը զրվելով գիտական հոգի վրա, — գրում է Պեկինի համալսարանի պրոֆեսոր Լյու Գո-ցզյունը, — բազմակողմանիորեն պարզացան և տեխնիկական մեծ առաջադիմության հասան: Ի վերջո իրենց ժամանակակից տեսքով թղթի արտադրության և գրատպության տեխնիկան նորից եկան Չինաստան»²²: «Ժամանակակից տպագրության եղանակով Չինաստանում առաջին անգամ տպագրել սկսեցին մոտավորապես 120—130 տարի առաջ»²³, Հայտնի է, որ այդ եղանակով առաջին շինարեն գիրքը տպագրվել է 1819 թվականին:

Կարելի է եզրակացնել, որ գրատպության տարբեր գյուտերից ամենահաջողն ու կատարյալը Գուտենբերգինն է եղել, որի շնորհիվ էլ տարածվել է ողջ աշխարհում: Ինչ վերաբերում է շինական տպագրությանը, ապա ներկայիս գրատպության առաջացման գործում նրա դերը սնտրանալի պետք է համարել: Իվրոպական, մասնավորապես գուտենբերգյան գրատպությունը այսպես թե այնպես օգտվել է շինականից: Կան պատմական վկայություններ այն մասին, որ շարժական տառերով տպագրելու գաղափարը (ինչպես և այդ եղանակով տպագրված գրքերի նմուշներ) Չինաստանից է թափանցել Իվրոպա, և որ այդ

21 E. Немировский и Б. Горбачевский, Рождение книги. М. 1957, т. 26—27.

22 Лю Го-цзюнь, Рассказ о китайской книге, М., 1957, т. 30.

23 Նույն տեղում, էջ 83.

գործում կարևոր դեր են կատարել հայ վաճառականները: Օրինակ, 1675-ին Չինաստան գնացած ռուսական ղեկավարության ղեկավար Նիկոլայ Սպաֆարին իր օրագրության մեջ գրում է. «Երբ կալմիկները ու թաթարները գրավեցին Չինաստանը և նրանց հետ Չինաստան եկան պատեր Օղերիկը, հայ Անտոնը և Պավել վենետիկցին, և իրոք նրանք Չինաստանից Եվրոպա բերեցին այս արվեստները՝ թնդանոթ ձուլել և գրքեր տպագրել»²⁴:

Չինական գրատպության ամենանշանավոր ուսումնասիրողներից մեկը՝ ֆրանսիացի Գյուիսմանը 1916-ին լույս տեսած իր «La gravure sur bois» գրքում պատմական փաստերի վրա հիմնվելով գրում է, որ չինական գրատպության մասին տեղեկությունները Չինական Թուրքեստանի վրայով գեպի Կովկաս, Փոքր Ասիա և ապա Ալեքսանդրիա ու Եվրոպա տարել են հայ վաճառականները:

Եվրոպա հասած այդ տեղեկությունները, անշուշտ, նպաստել են, որպեսզի 15-րդ դարի առաջին կեսում եվրոպական մի շարք քաղաքներում գրեթե միաժամանակ սկսվեն գրատպության փորձեր, որոնցից ամենահաջողը Գուտենբերգինն էր:

Այստեղ անհրաժեշտ է հիշել հայկական տպագրության պատմության մի շափաղանց կարևոր դրվագը, որի մասին շատ է խոսվել, բայց որը իր իսկական գնահատականը գեղեսցիկ ստացել: Դա նոր Ջուղայի տպարանի հարցն է: 1639—40 թվականներին նոր Ջուղայում նախատուր կեսարացու ղեկավարությամբ ստեղծվեց տպարան և թղթի գործարան: Տպարան ստեղծողներից ոչ մեկը չէր տեսել ոչ տպագրական մեքենա, ոչ նրա աշխատանքը, ոչ շարժական տառեր, ոչ էլ նրանց պատրաստելու ու շարելու եղանակը: Սակայն հայ վաճառականները, որոնք չինական տպագրության մասին ժամանակին լուրեր էին տարել Եվրոպայից, այս անգամ էլ Եվրոպական տպագրության մասին տեղեկություններ են բերում նոր Ջուղայի իրենց ազգակիցներին: Եվ այնպես, ինչպես Եվրոպայում Արևելքից եկած տեղեկությունների հիման վրա կատարվում է նոր տպագրության գյուտը, այնպես էլ Պարսկաստանի կենտրոնում Արևմուտքից եկած տեղեկությունների օգնությամբ կատարվում է տպագրության ինֆորմացիոն, հայկական գյուտը, որի արդյունքն են մեզ հասած երկր գրքերը²⁵ (1640—1642) և Աստվածաշնչի տպագրության փորձը: Չնայած սրան, իհարկե, հայ տպագրությունն էլ արդեն վարդանում էր եվրոպական գրատպության հիման վրա:

Այսպիսով, երբ խոսվում է տարբեր ժողովուրդների տպագրության սկզբի մասին, խոսքը վերաբերում է եվրոպական եղանակով գրատպությանը:

Երբ հայերեն առաջին գրքերը տպագրվեցին, Արևմտյան Եվրոպայի ժողովուրդները արդեն գրատպություն ունեին: Սակայն եթե արևմտաեվրոպական ժողովուրդների տպագրությունից հայկականը մի քանի տասնյակ տարով ուշ սկսվեց, ապա Արևելքի ժողովուրդների մեջ երբայականից հետո (հրեաները տպագրություն ունեցել են 1475-ից) առաջինը հայերենն էր, որ նոր,

²⁴ «Наука и жизнь», 1914, № 7—8, էջ 37:

²⁵ Գ. Զարրհանյանը, Լեոն, Գ. Լեոնյանը և Թեոդիկոս ու նրանց օրինակով ուրիշները, ն. Ջուղայի տպարանի մասին խոսելիս ասում են, «ո նրա գործունեության առաջին շրջանում այնտեղ տպագրվել է «Հարանց վարք» և «Փամաղիրք»: ն. Ջուղայի «Խորհրդատետր» հիշատակում է միայն Պալյանի իր ցուցակում («Քանասեր», 1905, էջ 108), որ համարվում էր կասկածելի: Իրականում այդ «Խորհրդատետր» գոյություն ունի, նրա մի օրինակը պահվում է Մատենադարանում (այդ մասին տե՛ս նաև Շ. Շահնազարյանի հոդվածը՝ «Քաները Մատենադարանի», № 6):

գուտենբերգյան տպագրության առարկա դարձավ, երրորդը արաբերենն էր (1515—1518): Խորհրդային Միության ժողովուրդների լեզուներով եղած հին տպագրությունների սկզբնավորման պատկերը հետևյալն է, հայերեն առաջին գիրքը (Պարզատումար) տպվել է 1512-ին, ռուսերեն առաջին գիրքը²⁶ (Սաղմոս) լույս է տեսել 1517-ին՝ Պրագայում²⁷, էստոներեն՝ (Կաթեխիզիս) 1535-ին՝ Վիտենբերգում, լիտվերեն (Մաթվիդասի «Կաթեքիզմը»)՝ 1547-ին Քյոնիգսբերգում (Կալինինգրադ), լատիշերեն՝ 1585-ին՝ Վիլնյուսում, վրացերեն (Վրաց-լատին բառարան)՝ 1629-ին Հոմում²⁸, մոլդավերեն («Վարլամի ասքը»)՝ 1643-ին՝ Յաշչում²⁹, Այսպիսով, Խորհրդային Միության ժողովուրդների լեզուներից առաջինը հայերենն է դարձել տպագրության լեզու:

Մի ժողովրդի հին գրատպության մյուս ընդունված չափանիշն այն է, թե երբ է տվյալ ժողովրդի հայրենիք մուտք գործել տպարանը: Այստեղ հայերը մը փոքր հետ են մնացել վերն ասված պատճառներով: Արևմտանվորոպական բոլոր երկրները տպագրությունը մուտք է գործել դեռևս 15-րդ դարի երկրորդ կեսին: Ըստ որոշ տեղեկությունների, 1504 թվականին գրատպություն է սկսվում Բրադիխայում³⁰, դա Ամերիկայի մայր ցամաքում առաջին տպագրական օջախն էր: 1491 թվականին տպագրությունը թափանցում է Լեհաստան (Կրակով), իսկ 1517-ին՝ Չեխիա: Խորհրդային Միության հնատիպ գրականություն ունեցող ժողովուրդների մոտ գրատպությունը թափանցել է հետևյալ թվականներին՝ չիտվա (Վիլնյուս)՝ 1525-ին, Մոսկվա՝ 1553—55-ին, Լատվիա (Ռիգա)՝ 1588-ին, էստոնիա (Տարտու)՝ 1631-ին, Մոլդավիա՝ 1642-ին, Վրաստան (Քրիլիսի)՝ 1709-ին, Հայաստան (էջմիածին)՝ 1771-ին:

Վերջապես այս կամ այն ժողովրդի հին տպագրության գնահատման համար ընդունված կարևոր չափանիշ է այդ ժողովրդի լեզվով եղած հնատիպ (այսինքն, մինչև 1800 թ. տպագրված) գրքերի քանակը: Աշխարհում հնատիպ գրքերը հաշվում են շուրջ երեք միլիոն անուն³¹: Ամենից ավելի հնատիպ գրքեր կան լատիներեն և արևմտանվորոպական արդի մի քանի լեզուներով: Շատ են, օրինակ, հնատիպ իտալերեն գրքերը (շուրջ 100.000 անուն)³²: Սակայն, սովորաբար առանձին (հատկապես փոքր) ժողովուրդների լեզուներով հնատիպ գրքերը լինում են մի քանի հարյուր անուն, կամ չեն հասնում հարյուրի, էլ չենք ասում, որ բազմաթիվ լեզուներով հնատիպեր բոլորովին չկան: Խորհրդային Միության ժողովուրդների լեզուներով հնատիպ գրքերի քանակը հետևյալն է. էստոներեն՝ 262, լատիշերեն՝ 420, լիտվերեն՝ 430 և լիտվերեն տեքստերով՝ 300=730, վրացերեն՝ 85: Ռուսերեն, ուկրաիներեն և մոլդավերեն հնատիպ գրքերի քանակը դեռևս հաշված չէ: Հայերեն հնատիպերի հիմնավորված, իրական քանակ նույնպես մեր բանասիրությունը չի տվել: Մինչև 1800 թ. տպագրված հայերեն գրքերի առաջին ցուցակը հրատարակել է Գ. Զարրհանալյանը 1883-ին իր «Հայկա-

²⁶ Խոսքը վերաբերում է 16-րդ դարի Արևմտյան Ռուսիայում օգտագործվող խոսակցական ուսուրենին, որ արդի բեյոռուսերենի հիմք դարձավ:

²⁷ Н. М. П а к у л ь, Книга, Харьков, 1923, էջ 82—83:

²⁸ Грузинская книга. Библиография, т. I, 1629—1920, Тбилиси, 1941, էջ 1—2:

²⁹ էստոներեն, լիտվերեն, լատիշերեն և մոլդավերեն հնատիպ գրքերի վերաբերյալ այս և հետագա տեղեկությունները վերցված են համապատասխան միութենական ռեսպուբլիկաների պետական հանրային գրադարանների պաշտոնական տվյալներից:

³⁰ «Советская библиография», 1959, № 6.

³¹ Н. М. П а к у л ь, Книга, էջ 71:

³² «Советская библиография», 1959, № 5, էջ 140:

կան մատենագիտության» մեջ: Այստեղ 1565-ից մինչև 1800 թվականը (ներառյալ) գրանցված է 690 անուն գիրք, իսկ Ջարբհանալյանի ողջ մատենագիտության մեջ կան 655 անուն հնատիպ գրքեր (չհաշված կրկնություններն ու սխալները): Նույն հեղինակի 1895-ին լույս տեսած «Պատմություն հայ տպագրության» աշխատությանը կցված ցուցակում գտնում ենք 648 հնատիպ հայերեն գրքերի անուններ (դարձյալ չհաշված կրկնությունները): Ա. Ղազիկյանի անավարտ «Հայկական նոր մատենագիտության» մեջ հնատիպ գրքերի քանակը 546 է (հանած կրկնությունները):

Բայց, այնուամենայնիվ, որքա՞ն հայերեն գիրք է իրականում լույս տեսել 1512-ից մինչև 1800 թվականը: 1959 թվականից մենք ձեռնարկեցինք հայերեն հնատիպ գրքերի մատենագիտական (ժամանակագրական) ցանկի կազմմանը: Ընդգրկեցինք Երևանի գրապահոցներում եղած հնատիպ գրքերը (շուրջ 550 անուն), ինչպես և մատենագիտական տարրեր բնույթի ցուցակների ու աշխատությունների մեջ բերված այն գրքերը, որոնք գտնվում են Վենետիկի, Վիեննայի, Երուսաղեմի և հայերեն գրքեր ունեցող արտասահմանյան այլ գրապահոցներում: Ցանկի մեջ մտան նաև մի քանի անուն գրքեր, որոնք գոյություն ունեցել են, բայց չեն պահպանվել կամ չեն հայտնաբերվել մինչև այսօր: Մատենագիտական ցուցակներից ու աշխատություններից, հնատիպերի հիշատակաբաններից և այլ գրավոր աղբյուրներից օգտվելիս՝ տարրեր միջոցներով ճշտվեցին հայ հնատիպ գրքերի հրատարակման հարցերի հետ կապված շատ սխալներ, որոնք տեղ են գտել գրականության մեջ, մի հեղինակից անցել մյուսին, առանց փաստերի ստուգման:

Ահա թե ինչպիսին ստացվեց հայ հնատիպ գրքի քանակական պատկերը ըստ մեր ցուցակի. 16-րդ դար՝ տպագրվել է 18 անուն հայատառ գիրք³³, 17-րդ դար՝ 146, 18-րդ դար՝ 751, ընդամենը՝ 915 անուն (ցուցակը շարունակում է լրացվել):

Այսպիսով, հայ հին տպագրության անխոնջ մշակները մինչև 19-րդ դարը հարազատ ժողովրդին տվել են ավելի քան 900 անուն մեսրոպատառ գիրք (որ անում է շուրջ 350.000 օրինակ)³⁴: Գարավական մեծ թիվ է մի բուռ ժողովրդի համար, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այդ գրքերը տպագրվել են գերված հայրենիքից հեռու, օտար ամիսներում, մեծագույն զոհողությունների գնով:

33 Գր. Գալեմբերյանը Հակոբ Մեղապարտի հրատարակությունների մեջ գնում է նաև մի սաղմոս, որ իբր ժամանակին տեսել են Սերաստիայում (տե՛ս նրա վերը նշված հոդվածը), իսկ Պալլանը (տե՛ս նրա վերը հիշատակված ցուցակը) Արգարի հրատարակությունների թվին է դասում մի «Հիսուս որդի»: Այդպիսով 16-րդ դարում տպված գրքերի քանակը 20 է դառնում: Սակայն այդ երկու գրքերի հարցը շատ կասկածելի է, առաջին դեպքում, ըստ երևույթին, Սերաստիայից լուր տվողը սխալմամբ Հակոբի տպագրություն է համարել Տերզնցու տպած սաղմոսը, իսկ երկրորդը երկի սովորական մի թյուրիմացություն է:

34 Նշատի ունենալով 16—18-րդ դարերի տարրեր ժամանակներում, տարրեր տպարանների հրատարակած գրքերի տպարանակը՝ թվում է, որ հայ հնատիպ գրքի միջին տպարանակը կարելի է ընդունել 400:



Վ. Խաչատրյան, Մերոպ Մաշտոց, 1959 թ.
Վաղակալն ՍՍՍԻ Գիտությունների ակադեմիայի շքամուտքի մոտ, Խճանկար